ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 46-Լ 19 նոյեմբերի 2021թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 20-րդ ենթակետով.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հաստատել Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում քաղաքացիների ընդունելության կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության լրատվության և հասարակայնության հետ կապերի վարչությանը՝

2.1 ապահովել հրամանի հրապարակումը պաշտոնական կայքէջում

2.2 նախարարության մուտքի մոտ՝ քաղաքացիների համար տեսանելի վայրում փակցնել հրամանի տեքստը:

3. Սույն հրամանը ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանը ուժի մեջ մտնելուց ուժը կորցրած ճանաչել Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 22 օգոստոսի 2019 թվականի «Հայաստանի Հանրապետության Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում քաղաքացիների ընդունելության աշխատակարգը հաստատելու մասին» N 32-Լ հրամանը:

ՆԱԽԱՐԱՐ՝ Վ.ԴՈՒՄԱՆՅԱՆ

X

Հավելված
ՀՀ կրթության, գիտության,
մշակույթի և սպորտի նախարարի
«19» «նոյեմբերի» 2021 թ. N 46 Լ հրամանի

ԿԱՐԳ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

Սույն կարգով կարգավորվում է Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում քաղաքացիների ընդունելության գործընթացը, որը անցկացվում է.

1. Նախարարի մոտ՝ ամեն ամսվա վերջին շաբաթվա ընթացքում՝ նախապես հայտարարված օրը և ժամին:
2. Նախարարի տեղակալների և գլխավոր քարտուղարի մոտ նախապես հայտարարված ժամին հետևյալ օրերին՝

2.1 հանրակրթության (այդ թվում նախադպրոցական կրթության), նախնական և միջին մասնագիտական կրթության ոլորտը համակարգող նախարարի տեղակալի մոտ - յուրաքանչյուր հինգշաբթի

2.2 բարձրագույն կրթության ոլորտը համակարգող նախարարի տեղակալի մոտ - յուրաքանչյուր ուրբաթ

2.3 արտաքին կապերի, սփյուռքի և երիտասարդության ոլորտը համակարգող նախարարի տեղակալի մոտ - յուրաքանչյուր ուրբաթ

2.4 մշակույթի ոլորտը համակարգող նախարարի տեղակալի մոտ - յուրաքանչյուր չորեքշաբթի

2.5 սպորտի ոլորտը համակարգող նախարարի տեղակալի մոտ - յուրաքանչյուր հինգշաբթի

2.6 նախարարության գլխավոր քարտուղարի մոտ նախարարության աջակցող ստորաբաժանումների գործառույթների հետ կապված հարցերով - յուրաքանչյուր հինգշաբթի:

3. Նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները և աշխատակիցները, իրենց կառուցվածքային ստորաբաժանումներում քաղաքացիների ընդունելությունը կազմակերպում են քաղաքացու կողմից այդ հարցով դիմելուց հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում նախապես համաձայնեցված ժամին:

Անհրաժեշտության դեպքում ընդունելությունները կազմակերպվում են փոխհամաձայնեցված ժամկետներում:

4. Նախարարի, նախարարի տեղակալների և գլխավոր քարտուղարի մոտ քաղաքացիների ընդունելությունը կազմակերպում է Հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչությունը:

5. Նախարարի մոտ ընդունելության կարող են գրանցվել այն քաղաքացիները, ովքեր արդեն ընդունելության են եղել նախարարի տեղակալի, նախարարության ենթակա կոմիտեների ղեկավարների կամ գլխավոր քարտուղարի մոտ, խնդրի վերաբերյալ ունեն հակասական, անորոշ, ոչ լիարժեք պատասխաններ և/կամ ըստ բարձրացված խնդրի կարևորության՝ հարցի լուծման համար պահանջվում է նախարարի վերջնական դիրքորոշումը և հանձնարարականը:

6. Նախարարի տեղակալի կամ գլխավոր քարտուղարի մոտ կարող են գրանցվել այն քաղաքացիները, որոնք իրենց հուզող հարցի վերաբերյալ ներկայացրել են դիմում, ստացել են դրա պատասխանը, որն իրենց չի բավարարել և/կամ հարցը քննարկել են համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի հետ և չեն ստացել բավարար պարզաբանում, ինչպես նաև, այն դեպքում, երբ օրենքով սահմանված ժամկետում չեն ստացել դիմումի պատասխանը:

7. Հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչությունը՝

7.1 Կատարում է կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի, տեղակալների, գլխավոր քարտուղարի մոտ այն քաղաքացիների նախնական գրանցումը,

ա/ ովքեր իրենց հուզող հարցի վերաբերյալ արդեն ներկայացրել են գրավոր դիմում, անցել են ստորին բոլոր օղակներով և ստացված պատասխանը կամ ստորաբաժանումների պաշտոնյաների մեկնաբանություններն իրենց չի բավարարել

բ/ իրենց կարծիքով ստացել են հարցի լուծման վերաբերյալ հակասական, օրենքին հակասող կամ անորոշ գրավոր, կամ բանավոր պատասխաններ,

գ/ քաղաքացուն տրված պատասխանը իրենց կարծիքով ոչ լիարժեք է, կամ խախտվել են դիմումին պատասխանելու ժամկետները, որն առաջացրել է խնդրի լուծման բարդություններ,

գ/ ըստ բարձրացված խնդրի կարևորության՝ հարցի լուծման համար պահանջվում է վերադաս օղակների վերջնական դիրքորոշումը և հանձնարարականը:

7.2 Իրազեկում են քաղաքացիներին ընդունելության օրվա և ժամի վերաբերյալ, համապատասխան ղեկավարի օգնականի հետ համատեղ կազմակերպում են ընդունելությունը:

7.3 Արձանագրում են ընդունելության ժամանակ տրված հանձնարարականները և դրանք փոխանցում են ընդհանուր բաժին փաստաթղթաշրջանառության կարգով մուտքագրելու նպատակով:

7.4 Ստեղծում և վարում են ընդունելության դիմած քաղաքացիների էլեկտրոնային գրանցամատյանը

7.5 Պատրաստում են հաշվետվություններ ընդունելությունների արդյունքների վերաբերյալ:

8. Նախարարի մոտ քաղաքացիների ընդունելությանը մասնակցում են կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության իրավաբանական վարչության պետը, նախարարի մամուլի քարտուղարը, հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչության աշխատակիցը, ըստ անհրաժեշտության նաև՝ մյուս վարչությունների պետերն ու աշխատակիցները:

9. Նախարարի տեղակալների կամ գլխավոր քարտուղարների մոտ ընդունելության մասնակիցների շրջանակը որոշվում է ըստ քաղաքացիներին հուզող հարցերի բովանդակության՝ համապատասխան ղեկավարի կողմից:

10. Քաղաքացին չի ընդգրկվում քաղաքացիների ընդունելության ցուցակում, եթե՝

10.1 Նույն խնդրով մասնակցել է նախարարի ընդունելությանը վերջին 3 ամսվա ընթացքում,

10.2 Վիրավորել կամ սպառնացել է նախարարության աշխատակիցներին,

10.3 Բարձրացված խնդիրը դուրս է նախարարության իրավասության շրջանակներից կամ ունի իրավական կարգավորումներ և չի ենթադրում պատասխանատու պաշտոնյաների անհատական միջամտություն: